

Հաստատված է՝
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի
գիտխորհրդի 2015 թ. հուլիսի 07 - ի նիստում
Արձանագրություն №
Գ ի տ խ ո ռ հ ի ղ ի ն ա խ ա գ ա հ ` ո ե կ տ ո ռ ,

տ.գ.դ-ր, պրոֆ. Գ. Շ. Գալստյան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ

I. Ընդհանուր դրույթներ

1.1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) Գիտատեխնիկական խորհրդի կանոնակարգով սահմանված է խորհրդի նպատակը և հիմնական խնդիրները, գործառույթները, խորհրդի կազմի ձևավորման կարգն ու աշխատակարգը, իրավունքները:

1.2. Գիտատեխնիկական խորհուրդը գործունեությունն իրականացնում է «Կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, գիտատեխնիկական գործունեության և զարգացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, Համալսարանի կանոնադրության, ներքին ակտերի, պահանջներին համապատասխան:

1.3. Գիտատեխնիկական խորհուրդն աջակցում է համալսարանի գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորական աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

II. Խորհրդի նպատակը և հիմնական խնդիրները

2.1. Համալսարանի գիտատեխնիկական խորհրդի նպատակը Համալսարանի գիտական գործունեության արդյունավետ կառավարման պայմանների ապահովումն է՝ Համալսարանի գիտական հանրության ներգրավվածությամբ այդպիսի գործունեության կազմակերպումը և գիտական ստորաբաժանումների աշխատանքի որակի բարձրացումը, գիտական գործունեության արդյունքների՝ տնտեսությունում և ուսումնական գործընթացի մեջ օգտագործման գնահատումը:

2.2. Գիտատեխնիկական խորհրդի խնդիրներն են՝ համակարգել գիտական ստորաբաժանումների աշխատանքները, գիտահետազոտական, նախագծային և կոնստրուկտորական աշխատանքների իրականացման ընթացքում:

III. Գիտատեխնիկական խորհրդի ձևավորման կարգը

3.1. Գիտատեխնիկական խորհուրդը ձևավորվում է համալսարանի ճանաչված գիտական աշխատանքների, առաջատար գիտնականների, գիտությամբ զբաղվող ուսանողության, գիտական ստորաբաժանումների, գիտական հիմնադրամների 11 ներկայացուցիչներից:

3.2. Խորհրդի աշխատանքները կազմակերպում են նախագահը, նախագահի երկու տեղակալները, գիտական քարտուղարը:

3.3. Գիտատեխնիկական խորհրդի կազմը ձևավորվում և փոփոխությունները կատարվում են Համալսարանի ռեկտորի հրամանով՝ համալսարանի Գիտական աշխատանքները համակարգող պրոռեկտորի (այսուհետ՝ Պրոռեկտոր) ներկայացմամբ:

3.4. Գիտատեխնիկական խորհրդի կազմում ընդգրկվում են՝

- Պրոռեկտորը՝ նախագահ, համալսարանի գիտահետազոտական և հրատարակչական սեկտորների ղեկավարները՝ տեղակալներ, գիտական քարտուղարը և անդամները՝ Համալսարանի ճանաչված գիտնականներ, ստորաբաժանումների ներկայացուցիչներ, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը գործուն մասնակցություն ունեցող աշխատողներ և ուսանողներ:

IV. Գիտատեխնիկական խորհրդի աշխատակարգը

4.1. Գիտատեխնիկական խորհրդի գործունեությունն իրականացվում է նիստի միջոցով օրակարգի հարցերի քննարկմամբ և որոշումների ընդունմամբ:

4.2. Նիստերը, որպես կանոն, բաց են: Նիստերին կարող են հրավիրվել Համարսարանի ստորաբաժանումների և այլ բուհերի ու կազմակերպությունների ներկայացուցիչներ:

4.3. Գիտատեխնիկական խորհուրդն իր իրավասությունների շրջանակներում ընդունում է որոշումներ:

4.4. Խորհրդի որոշումները ձևակերպվում են արձանագրությամբ: Արձանագրությունը ստորագրում են խորհրդի նախագահը և գիտական քարտուղարը:

4.5. Գիտահետազոտական խորհրդի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ:

4.6. Քննարկվող հարցերի վերաբերյալ գիտատեխնիկական խորհուրդն ընդունում է որոշումներ և եզրակացություններ: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստը իրավագոր է խորհրդի անդամների 2/3-ի մասնակցության դեպքում:

V. Գիտատեխնիկական խորհրդի իրավունքներն ու գործառույթները

5.1. Գիտատեխնիկական խորհուրդը՝

- 1) մշակում և քննարկում է իր կանոնակարգը, գործունեության ծրագիրը և ներկայացնում համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը,
- 2) ապահովում է պրոռեկտորի կողմից համակարգվող ստորաբաժանումների կառուցվածքի կատարելագործման աշխատանքները,
- 3) քննարկում և գնահատում է ստորաբաժանումների և գիտական ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները,
- 4) հաստատում է պետբյուջեից ֆինանսավորվող գիտահետազոտական աշխատանքների իրականացման առաջարկությունների դիտարկման և դրանց արդյունքների գնահատման փորձագիտական հանձնաժողովների կազմը,
- 5) գնահատում է գիտական թեզի մասնագիտական խորհրդի աշխատանքը,
- 6) հաստատում է գիտական ստորաբաժանումների որակավորման պահանջները,

- 7) որոշում է Համալսարանի գիտական հետազոտությունների և ինովացիոն գործունեության հիմնական ուղղությունները,
- 8) մշակում է Համալսարանի գիտական ստորաբաժանումների զարգացման հեռանկարները, դրանց համապասխանությունը Համալսարանի մասնագետների պատրաստման մասնագիտացված և կրթական ծրագրերին,
- 9) մրցութային հիմունքով անցկացվող գիտահետազոտական աշխատանքների համար բաշխում է բյուջետային ֆինանսավորման և գիտական հետազոտությունների աջակցության ֆոնդերի միջոցները,
- 10) ապահովում է գիտահետազոտական աշխատանքների արդյունքների կիրառում Համալսարանի կրթական գործընթացներում,
- 11) ապահովում է ուսանողների, ասպիրանտների, դոկտորանտների և պրոֆեսորադասախոսական կազմի՝ Համալսարանի գիտահետազոտական աշխատանքների իրականացման և ինովացիոն գործունեության լայն և արդյունավետ ներգրավման պայմանները,
- 12) որոշում է Համալսարանի գիտական ստորաբաժանումներում գիտության զարգացման հեռանկարները, անցկացվող գիտական հետազոտությունների ուղղությունները,
- 13) քննարկում, վերլուծում և գնահատում է Համալսարանում իրականացվող գիտական հետազոտությունների հիմնական, ինչպես նաև Համալսարանի ստորաբաժանումների գիտական աշխատանքների արդյունքները,
- 14) քննարկում է պրոբլեմային լաբորատորիաների ստեղծման նպատակահարմարությունը, հաստատում դրանց ծրագրերը և հաշվետվությունները,
- 15) քննարկում և գնահատում է գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունները,
- 16) քննարկում և հրատարակության է երաշխավորում Համալսարանում տպագրվող գիտական պարբերականների հաջորդական համարները, մենագրությունները և այլ գիտական աշխատանքները,
- 17) հաստատում է պետական արտոնագրերով իրականացվող պայմանագրային աշխատանքները և փորձագիտական աշխատանքների նախագծերը,
- 18) երաշխավորում է հասարակական, գիտական կազմակերպություններում թափուր տեղերի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով թեկնածուներին:

5.2. Մշակում է հանձնարարականներ՝ գիտական ստորաբաժանումների գործունեության նորմատիվ բազայի ձևավորման, ինչպես նաև Համալսարանի գիտական ստորաբաժանումները կարգավորող այլ Կարգերի վերաբերյալ:

5.3. Քննարկում և առաջարկություններ է ներկայացնում համալսարանի ռեկտորին գիտական հետազոտությունների, հիմնական ուղղությունների, գիտահետազոտական աշխատանքների թեմատիկայի ու ծրագրերի վերաբերյալ:

5.4. Քննարկում է գիտության զարգացման հրատապ հիմնահարցերը, լսում գիտական հաղորդումներ և ընդունում համապատասխան որոշումներ:

VI. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդում ընդունվելուց և համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց անմիջապես հետո:

6.2. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

6.3. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոնակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով և Համալսարանի կանոնադրությամբ:

Գիտական քարտուղար՝

Լ.Հ.Լևոնյան

07 հուլիսի 2015թ.

Գիտխորհրդի որոշում № 03-02/10